

Տարբերակ 1

1. Գտնել  $y = 0,5x - 4$  և  $y = 1\frac{1}{4}x + 8$  ուղիղների հատման կետի հեռավորությունը արագիսների (x-երի) առանցքից:

Պատ.՝ 12

2. Սայլի առջևի անիվի շրջանագծի երկարությունը 2,5 մ է, իսկ հետևի անիվինը՝ առջևինից 40%-ով ավելի: Քանի՞ մետր ճանապարհ կանցնի սայլը, եթե առջևի անիվը 20 պտույտ ավել կատարի, քան հետևի անիվը:

Պատ.՝ 175

3. Վերլուծել արտադրիչների.  $a^3 + a^2 - 12$

Պատ.՝  $(a-2)(a^2 + 3a + 6)$

4. Դիցուք  $A$ -ն 5-ի վրա չբաժանվող երկնիշ թվերի բազմությունն է, իսկ  $B$ -ն 3-ի վրա բաժանվող երկնիշ թվերի բազմությունն է: Գտնել  $A \cup B$  բազմության տարրերի քանակը:

Պատ.՝ 78

5. Ջրոյից տարբեր երեք տարբեր թվանշաններով կազմել են բոլոր հնարավոր չկրկնվող թվանշաններով երկնիշ թվերը: Պարզվել է, որ այդ բոլոր թվերի գումարը հավասար է 154-ի: Գտնել այդ թվանշանները: (Հիմնավորել):

Պատ.՝ 1; 2; 4

6. Ապացուցել, որ ցանկացած 11 բնական թվերից կարելի է ընտրել երկուսը, որոնց գումարը կամ տարբերությունը բաժանվում է 19-ի:

7.  $AD$ -ն  $ABC$  եռանկյան կիսորդն է, իսկ  $DH$ -ը՝  $ADC$  եռանկյան բարձրությունը: Գտնել  $ABC$  անկյունը, եթե  $DH = 4$  սմ,  $BD = 8$  սմ:

Պատ.՝  $30^\circ$  կամ  $150^\circ$

8. Տրված է  $\angle BAC = \angle CAM$ ,  $\angle BEC = \angle BDA$ ,  $AD = CE$ ,  $BE = BD$ : Ապացուցել, որ  $AM$ -ը գուգահեռ է  $BC$ -ին:

